Ինձ աթոռ բերին: Բայց ես իմ մասնաւոր յարգանքը ցոյց տալու համար հրաժարուեցի ու նստեցի նրանց նման փոքրիկ կաշէ բարձի վրա:

Իմ կաւալէրս ամեն ճիգ գործ էր դնում եւրոպացի լինելու. շարունակ գնում, գալիս էր ու ամեն անգամ նստելով կողքիս ներողութիւն էր խնդրում ու հարցնում, արդեո՞ք իր սիգարը ինձ չի խանգարում: Վերջը, չը գիտեմ ինչու, յանկարծ սկսեց պատմել թէ առ այժմ առեւտրական է, թէեւ իր միակ փափագն է անպատճառ անցնել Ամերիկա մի քիչ աշխարհ տեսնելու:

Այդ խօսակցութեան միջոցին մտաւ տանտէրը, մի վայելչահասակ գեղեցիկ ճապոնացի:

Մենք փոխադարձ տւինք մեր բարեւները, այսինքն ձեռները դրած մեր ծնկներին՝ խոր գլուխ տւինք միմեանց:

Նախ նա յայտնեց իր ջերմ ուրախութիւնը, որ ես պատւել եմ իր տունը իմ այցելութեամբ, յետոյ հարցրեց ազգութիւնս, եւ երբ իմացաւ, թէ հայ եմ, խիստ զարմացած աչքերը չռեց ու հարցրեց վարանումով.

«Ա՞յն հայերից, որոնք շարունակ թուրքերի դէմ կռում են»:

Հիմա էլ զարմանալու հերթը իմս էր:

–Ախ, մի՞թէ դուք լսել էք հայերի մասին:

–Ինչպէս չէ. յիշում եմ մի քանի տարի առաջ կոտորածներ կային, եթէ չեմ սխալւում: Այստեղ մի ինչ որ միսիոնար փող էր հաւաքում ձեզ ուղարկելու համար: Հիմա ի՞նչ վիճակի մէջ է ձեր երկիրը:

Ես նայում էի նրա երեսին ու չը գիտէի, ինչ պատասխանեմ, ուրախանամ թէ՞ տխրեմ, որ մեր մեծ ցաւերի ալիքները